

«Մուրն» ամսագրի 1902 թ. № 1-ում սպուած «Աղջիկ» վերնագրով էսիւդիս յառաջաբանը գրելիս, ես վերցրել եմ ինքնասպանութեան մի ցաւալի դէպք (որի մասին խոյ կերպով յիշատակուած էր մեր թերթերում), իբրեւ նիւթ գեղարուեստական գրուածքիս համար, եւ չէի կարող ենթադրել, որ ընթերցողը կարող կը լինէր գուշակել, թէ ի՛նչ իրական դէպք եմ ես ի նկատի ունեցել:

Սակայն ընթերցողներից ոմանք եւ մասնաւորապէս Մարիամի նախասիւսի ազգականները հասկացել են, թէ ո՛ւմ եմ ես վերցրել իբրեւ նախասիւս իմ հերոսունու համար:

Այս հանգամանքը ինձ վրայ պարտականութիւն է դնում բացարձակապէս յայտնելու, որ թէ՛ ինքնասպանութեան պատճառները եւ թէ այն բոլորը, ինչ որ գրել եմ Մարիամի ժառանգականութեան եւ թէ նրա ծնողների դէպի նա ունեցած վերաբերմունքի մասին, լոկ իմ երեւակայութեան արդիւնքներն են եւ գրուած են այն պատճառով, որ այդպէս էր պահանջում էսիւդիս ծրագիրը:

Օգտուելով այս առիթից, յայտնում եմ իմ անկեղծ ցաւը, որ հակառակ իմ կամքին, ես, անզգուշաբար, գրուածովս նորոգել եմ Մարիամի նախասիւսի մեծիմների սրտում դեռ եւս թաւմ խոցը:

ԲԺԿ. Վ. ԱՐՇՐՈՒՆԻ